

Թեստային առաջադրանքի օրինակներ

Ձև 1. Ճիշտ պատասխանի ընտրություն

Հարց 1.

Ո՞ր իրավական ակտերին պետք է համապատասխանեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը:

1. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին.
2. սահմանադրական օրենքներին և օրենքներին.
3. միջազգային պայմանագրերին:

(2, ՀՀ Սահմանադրություն, հոդված 5, մաս 2)

Ձև 2. Այլընտրանքային ընտրություն

Հարց 2.

Արդյո՞ք էլեկտրոնային փոստը հնարավորություն է ընձեռում միաժամանակ տարբեր հասցեներով հաղորդագրություններ առաքել:

1. Այո.
2. Ոչ:

(1, Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013, էջեր 29-30)

Ձև 3. Համապատասխանության որոշում

Հարց 3.

Դասավորե՛ք ըստ համապատասխանության ձախ սյունակի տերմինները և աջ սյունակի մեկնաբանությունները:

- | | |
|--|--|
| 1. Կոմպետենցիա | Ա. քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործում. |
| 2. Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում | Բ. անձնակազմի կառավարման ստորաբաժանման քաղաքացիական ծառայող, որի պաշտոնի անձնագրում ամրագրված են քաղաքացիական ծառայողի բարելավության պահանջների մասով իրավունքներ և պարտականություններ. |
| 3. Բարելավության հարցերով կազմակերպիչ | Գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացի, որ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն և կատարում է այդ պաշտոնին վերապահված մասնագիտական գործունեություն կամ գրանցված է քաղաքացիական ծառայության կադրերի |

4. Քաղաքացիական ծառայող՝

ռեզերվում և վարձատրվում է Հայաստանի
Հանրապետության պետական բյուջեից.

Դ. գիտելիքների, ունակությունների, հմտությունների և
վարքագծի ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի
անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ
իրականացման համար:

1. 1-Ա, 2-Բ, 3-Գ, 4-Դ.
2. 1-Բ, 2-Գ, 3-Դ, 4-Ա.
3. 1-Գ, 2-Դ, 3-Ա, 4-Բ.
4. 1-Դ, 2-Ա, 3-Բ, 4-Գ:

(4, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք, հոդված 4, մաս 1, կետեր 4, 6, 9, 10)

4. Հաջորդականության որոշում

Հարց 4

**Դասավորե՛ք քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար
անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման գործողությունների փուլերը ճիշտ
հերթականությամբ:**

Ա. մրցույթի թեստավորման անցկացման պատասխանատուի նշանակում.

Բ. հարցազրույցի անցկացման ձևաչափի ընտրություն.

Գ. հարցազրույցն անցկացնող հաճնաժողովի ձևավորում.

Դ. մրցույթի մասին հայտարարության հրապարակում:

1. Ա, Բ, Գ, Դ.
2. Բ, Դ, Ա, Գ.
3. Դ, Ա, Գ, Բ.
4. Գ, Ա, Դ, Բ:

(2, ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-Ն N 1554-Ն որոշում)